

ԼՈՒՐԵՐ ՌՈՒՄԻՆԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻՑ

ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆ ԴԵՊԻ ՍՈՒՉԱՎԱ

Նվիրական ավանդություն է դարձել ամեն տարի, Սուրբ Աստվածածնի տոնի առթիվ, ուխտագնացություն կազմակերպել դեպի Սուչավայի հայկական վանքերն ու եկեղեցիները և մանավանդ դեպի Հաճոյակատար Ս. Աստվածածին վանքը:

Այս տարի նույնպես Ռումինիայի և Բուլգարիայի հայոց թեմական առաջնորդ Տ. Տիրայր արքեպիսկոպոս Մարտիկյանի նախաձեռնությամբ կազմակերպվել է Ռումինիայի բոլոր հայաշատ քաղաքներից և արտասահմանից ժամանած հայ հավատացյալների բազմամարդ մի ուխտագնացություն դեպի Սուչավա: Եռօրյա ուխտագնացությունը սկսվել է Սուչավայի Հայկական փողոցի վրա գտնվող Ս. Խաչ եկեղեցուց: Օգոստոսի 13-ին, շաբաթ օրը, երեկոյան, Սուչավայի հայոց հոգևոր հովիվ Տ. Արամայիս վարդապետ Շլուկյանը եկեղեցու բակում դիմավորել և ողջունել է Տ. Տիրայր արքեպիսկոպոսին հայ և օտար բազմաթիվ հավատացյալների ներկայությամբ և վանգերի ղողանջների ներքո «Հրաշափառ»-ով առաջնորդել նրան տաճար, ուր տեղի է ունեցել Հսկման արարողություն: Արարողության ավարտին սրբական հայրը իր խոսքի մեջ նշել է, որ այս օրը կուգադիպում է Սուրբ Էջմիածնի Շողակաթի տոնին և ընդգծել հայ եկեղեցական տոների և ավանդությունների նշանակությունը հայ ժողովրդի կյանքում: Այդ օրը մինչև ուշ ժամանակ հայկական կրոնական մեղեդիների հընչյունների տակ ուխտավոր հայ կանայք օգնել են մատաղի և հնավանդ «ականջապուրի» պատրաստման աշխատանքներին:

Օգոստոսի 14-ին, կիրակի օրը, առավոտյան, հավատացյալների բազմությունը, առաջնորդ սրբազանի գլխավորությամբ, բլուրն ի վեր բարձրացել է դեպի Ս. Հաճկատարի վանքը՝ «Առաւօտ լուսոյ» գեղեցիկ շարականի երգեցողությամբ փառաբանելով արդար արեգակի երևումը: Եկեղեցու մուտքին Տ. Տիրայր արքեպիսկոպոսը ծնկաչոք երգել է՝ «Անկանիմ առաջի քո Սուրբ Աստուածածին» շարականը, այնուհետև հանդիսավորությամբ մուտք գործել եկեղեցի և բարձրացել Սուրբ Սեղան՝ պատարագեալ: Պատարագի արարողության ավարտին նա օրհնել է մատաղը և ապա հրավիրել հավատացյալներին ճաշակելու: Այդ օրը շուրջ հազար հոգի հաղորդվել են մատաղի ճոխ սեղանից:

Նույն օրը, երեկոյան, Ս. Խաչ եկեղեցու բակում տեղի է ունեցել հանդիսավոր վերաբացումը Սուչավայի նախկին հայկական դպրոցի շենքի, որն այսուհետև ծառայելու է որպես ռումինահայ գաղութի առաջնորդարանի մասնաճյուղ և միաժամանակ որպես թանգարան ու հայ մշակութային կենտրոն:

Հավատացյալների ծափահարությունների ներքո Տ. Տիրայր արքեպիսկոպոսը կտրել է մուտքի ժապավենը, և շարականի երգեցողության տակ ներկաների առաջ լայնորեն բացվել են շենքի մուտքի դռները: Վերանորոգված լուսավոր սրահները հիացմունք ու կարմանք են պատճառել բոլորին: Այստեղ

Հաճկատառի Ս. Աստվածածին եկեղեցին

Սույն շենքը կառուցվել է 1824 թվականին և ունի հետևյալ արձանագրությունը.

«Դպրատունս այս ըստ բոլորին,
Շինեալ եղև ի փառս Փրկչին,
Արդեամբք մերոյ հայոց ազգին,
Որք դաւանմամբ Լուսաւորչին,
Առ ի յօգուտ մանկանց ազգինն,
Որք ի Սոչով յայս քաղաքին,
Յամի Փրկչին 1824 Ը Հայոց 1273-ին»:

ողջույնի խոսքով հանդես է եկել Սուչավայի հայոց հոգևոր հովիվը՝ ուրախություն հայտնելով, որ Սուչավայում, Աստուծո օգնությամբ, ստեղծվել է մի նոր լուսավորության կենտրոն: Հանդիսության ընթացքում ելույթ են ունեցել նաև ռումինահայ թեմական խորհրդի անդամներ տիարք Արամ Հակոբը և Անդրանիկ Անտոնյանը: Հանդիսության վերջում իր փակման խոսքի մեջ առաջնորդ սրբազանը գոհունակությամբ նշել է, որ Սուչավայի հայ-

կական փոքրիկ համայնքի կյանքում ոգևորիչ մի իրադարձություն է սույն շենքի բացումը, որը արդյունքն է տեղի հայոց երիտասարդ

կու հարյուր հայ ուխտավորներ ջերմ ու խանդավառ մթնոլորտում:

Հետևյալ օրը, երկուշաբթի, ուխտավորնե-



Հաճկատարի Ս. Աստվածածին եկեղեցու Ավագ խորանը

հոգևոր հովվի տարած հայրենասիրական հետևողական աշխատանքի: «Այժմ մենք կարող ենք անվարան ասել,—շարունակել է սրբազանը,—որ վերահաստատվեց 1401 թվականին հիմնված հայոց առաջնորդարանը Ասչավայի մեջ»:

Հանդիսությանը հաջորդել է հյուրասիրություն, որին ներկա են եղել ավելի քան եր-

իը առաջնորդ սրբազան հոր և հոգևոր հովվի առաջնորդությամբ կրկին բարձրացել են դեպի Հաճկատարի վանքը՝ խնկով և արցունքով ոգեկոչելու հիշատակը համորեն ննջեցյալների: Հոգեհանգստյան աղոթքին հաջորդել է մատաղի սեղան և հոգևոր համերգ, որի ավարտին առաջնորդ սրբազանը օրհնել է հավատացյալ ուխտավորներին՝

Սուչավայի հայոց հովվատունը

հրավիրելով նրանց հաջորդ տարի կրկին ուխտի գալ Սուչավա՝ Հաճկատարի վանք:

Բոլոր ուխտավորները վերանորոգված հոգիներով և գոհունակ սրտերով բաժանվել են սուրբ տաճարից՝ ուխտելով անխախտ պահել և փոխանցել հաջորդ սերունդներին առաքելական ուղղափառ հավատքը, մայրենի քաղցը լեզուն և հայ ժողովրդի դարավոր ավանդությունները: